

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021թ. մայիսի 11-ի թիվ 133-Ա որոշում

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ առողջապահության նախարարություն

**Հաշվեքննության
առարկան**

Առողջապահության նախարարության 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն

**Հաշվեքննությունն
ընդգրկող
ժամանակաշրջանը**

2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. մարտի 31-ը

**Հաշվեքննության
կատարման ժամկետը**

2021թ. մայիսի 19-ից մինչև 2021թ. հուլիսի 31-ը

**Հաշվեքննության
մեթոդաբանությունը**

Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն
Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը

**Հաշվեքննություն
իրականացնող
կառուցվածքային
ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	4
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ	5
3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	6
4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	7
5.1 «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի վերաբերյալ	8
Աշխատանքի վարձատրություն.....	9
Ներքին գործուղում	14
5.2 Համամասնորեն ֆինանսավորվող ծրագրերի վերաբերյալ.....	15
5.3 Դեպքերի անհատական վարման (case management) ընթացակարգի կիրառմամբ իրականացված միջոցառումներ	17

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՊ	Հաշվեքննիչ պալատ
ԱՆ	Առողջապահության նախարարություն
Նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն
ՊԱԳ	Պետական առողջապահական գործակալություն
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԲԿ	Բժշկական կենտրոն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԱԱՊԿ	Առողջության առաջնային պահպանման կենտրոն
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

ՀՀ առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է առողջապահության բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

Նախարարության առաքելությունն է առողջապահության զարգացման քաղաքականության, պետական նպատակային ծրագրերի մշակումը, դրանց իրականացման կազմակերպումը, սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը, բնակչության առաջնային և մասնագիտացված բժշկական օգնության ու ծառայությունների ապահովման կազմակերպումը, մոր և մանկան առողջության պահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, բնակչության առողջության բարելավման միջոցառումների կազմակերպումը և առողջական վիճակի ուսումնասիրությունը, հաշմանդամության ու մահացության նվազեցման ծրագրերի մշակումը և իրագործումը:

Առողջապահության բնագավառում միջազգային ու միջգերատեսչական համագործակցության ապահովումը, երեխաների, կանանց կեցության և առողջության իրավիճակային վերլուծության կազմակերպումը, ոլորտի գերակա խնդիրների սահմանումը, նպատակային ծրագրերի մշակումն ու ներդրումը, առողջապահության բնագավառին առնչվող օրենսդրական, իրավական ակտերի նախագծերի մշակումը, ընդունված իրավական ակտերի նկատմամբ վերահսկողության ապահովումը, համակարգի գործունեության կազմակերպումը, կառավարումն ու ֆինանսավորումը ևս իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից:

Նախարարության աշխատանքների կազմակերպումն ուղղված է ՀՀ ողջ տարածքում մարչելի ու որակյալ առողջապահական ծառայությունների ապահովմանը:

Հաշվեքննությունն իրականացվել է հաշվեքննության առաջադրանքի հիման վրա՝ էականության հատուկ շեմից բարձր հետևյալ ծրագրերի համար.

1. Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 5,228,278.38)
2. ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների իրականացում (դրամարկղային ծախս՝ 3,860,533.75)
3. Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 3,313,495.00)
4. Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 1,373,539.60)
5. Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 1,288,510.20)
6. Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 1,104,302.70)
7. Իմունականխարգելման ազգային ծրագիր (դրամարկղային ծախս՝ 992,613.60)
8. Շտապ բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 795,827.60)
9. Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 761,167.90)

10. Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 594,580.70)
11. Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 567,498.30)
12. Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 526,061.80)
13. Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց (դրամարկղային ծախս՝ 421,607.63)
14. Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 401,928.80)
15. Սրտի անհետաձգելի վիրահատություններ (դրամարկղային ծախս՝ 330,255.00)
16. ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID) կանխարգելմանն ուղղված՝ պատվաստանյութի ձեռքբերման միջոցառումներ (դրամարկղային ծախս՝ 294,183.35)
17. Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «ՀՀ-ում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր (դրամարկղային ծախս՝ 191,907.02)
18. Առողջապահության ոլորտի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ (դրամարկղային ծախս՝ 183,697.45)

Վերոնշյալ ծրագրերի դրամարկղային ծախսը կազմել է 22,229,988.78 հազ. դրամ, հաշվեքննության ծածկույթը՝ ծախսերի՝ 95%-ը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների իրականացում» ծրագրի կատարման նկատմամբ Հաշվեքննիչ պալատի 2021թ. հունվարի 29-ի թիվ 13-Ա որոշմամբ իրականացվելու է կատարողականի հաշվեքննություն, 2021թ. առաջին եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվեքննության շրջանակներում նշված ծրագրի իրականացման համար կատարված ծախսերին անդրադարձ չի կատարվել, դրա համապարփակ ուսումնասիրությունը կիրականացվի կատարողականի հաշվեքննության շրջանակներում:

3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀՀ 2021թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն Նախարարությանը բյուջետային ընդհանուր թվով 15 ծրագրերի իրականացման համար նախատեսվել է հատկացնել 25,327,124.80 հազ. դրամ: ՀՀ կառավարության որոշումների համաձայն 1-ին եռամսյակի ծախսերը նախատեսվել է ավելացնել 2,027,532.0 հազ. դրամով, ինչի արդյունքում 2021թ. 1-ին եռամսյակի ճշգրտված պլանը կազմել է 27,354,656.80 հազ. դրամ:

Ըստ ծրագրերի Նախարարության 1-ին եռամսյակի ցուցանիշները և ծրագրերի փաստացի կատարողականը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.
հազ. դրամ

	Ծրագիր	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Դրամարկղային ծախս	%
	Ընդամենը	27,354,656.80	23,459,015.61	85,8
1	Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն	6,106,961.1	4,598,348.5	75,3
2	Հանրային առողջության պահպանում	5,745,275.1	5,587,769.3	97,3
3	Առողջության առաջնային պահպանում	5,448,690.8	5,296,263.58	97,2
4	Մոր և մանկան առողջության պահպանում	3,355,304.1	2,816,850.1	84,0
5	Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում	3,320,397.8	2,779,563.7	83,7
6	Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագիր	946,712.2	497,333.44	52,5
7	Շտապ բժշկական օգնություն	866,826.7	795,827.6	91,8
8	Դեղապահովում	698,159.9	441,607.63	63,3
9	Վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծրագիր	510,486.3	300,556.1	58,9
10	Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	185,890.4	183,777.45	98,9
11	Դատաբժշկական և ախտաբանաանատոմիական ծառայություններ	121,344.4	119,191.2	98,2
12	Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ	45,500.0	40,181.01	88,3
13	Սոցիալական փաթեթների ապահովում	1,992.0	1,746.0	87,7
14	Այլընտրանքային աշխատանքային ծառայություն	1,116.0	-	-
15	Ռազմական դրությամբ պայմանավորված առողջապահական միջոցառումների ապահովում	-	-	-

4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, 2021թ. Նախարարության 1-ին եռամսյակի փաստացի ծախսը կազմել է 31,951,737.97 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 23,459,015.61 հազ. դրամ:

Հաշվետվության մաթեմատիկական ճշգրտությունը ստուգելու համար կիրառվել է ճշգրտության ստուգման ընթացակարգը, որի շրջանակներում կատարվել է ծրագրերի ծախսային ընդհանուր ցուցանիշների և գործառնությունների հանրագումարի համադրում, ինչի արդյունքում պարզվել է, որ ծրագրերի համար իրականացված ծախսերի ցուցանիշը համապատասխանում է առանձին հոդվածների ցուցանիշների հանրագումարին:

Դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, Նախարարության դեբիտորական պարտքը 01.01.2021թ. կազմել է 2,365,975.81 հազ. դրամ, որն ամբողջությամբ գոյացել է նախորդ տարիներից: 31.03.2021թ. դրությամբ դեբիտորական ընդհանուր պարտքը կազմել է 3,183,409.98 հազ. դրամ:

Դեբիտորական պարտքերը հիմնականում ձևավորվել են ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների իրականացում միջոցառման (466,053.3 հազ. դրամ), ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելմանն ուղղված՝ պատվաստանյութի ձեռքբերման միջոցառումներ միջոցառման (890,000.0 հազ. դրամ) և Դեղորայքի

տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց միջոցառման (656,765.9 հազ. դրամ) շրջանակներում պահուստավորված միջոցների հաշվին:

Կրեդիտորական պարտքերը 01.01.2021թ. դրությամբ կազմել են 1,458.81 հազ. դրամ և ամբողջապես ձևավորվել 2020թ. բյուջեից: 2021թ. դրանք աճել են՝ կազմելով 9,305,569.63 հազ. դրամ: Կրեդիտորական պարտքերը պայմանավորված է նրանով, որ 2021թ. մարտ ամսին առաջացած պարտավորությունների վճարումները կատարվել են ապրիլ ամսին:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2020թ. դեկտեմբերի 16-31-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպությունների կողմից Նախարարությանը մատուցած ծառայությունների համար փաստացի վճարումը իրականացվել է 2021թ.-ին՝ տվյալ տարվա բյուջետային միջոցների հաշվին: Նախարարությունը չպահպանելով գնումների ոլորտը կարգավորող օրենսդրության, ինչպես նաև ՀՀ ստանդարտի պահանջները, 2020թ. դեկտեմբերի 16-31-ն ընկած ժամանակահատվածում փաստացի մատուցված 4,377,650.4 հազ. դրամի (տվյալն ըստ ԱՐՄԵԴ հարթակի) ծառայությունների համար ծախսագրում չի իրականացրել, այն որպես կրեդիտորական պարտք չի ճանաչել և դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին հաշվետվության մեջ չի ներառել:

Միաժամանակ, 2020թ. դեկտեմբերի 28-ին Նախարարության գլխավոր քարտուղարի 534-Ա, 535-Ա, 536-Ա, 537-Ա հրամանների համաձայն (որոշման 29.2, 29.3 կետեր) թվով 4 աշխատակից՝ փորձաշրջան անցնող նորանշանակ աշխատակիցների աշխատանքները համակարգելու նպատակով պարգևատրվել է 2,075.3 հազ. դրամ գումարով: Նախարարությունը 2020թ. ոչ միայն աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոց, այլ ընդհանրապես գումար չի ունեցել, ինչի հետևանքով չի կարողացել կատարել 2,075.3 հազ.դրամի վճարումը, ավելին՝ 2020թ. տարեկան հաշվետվությունում անգամ չի ձևակերպել որպես կրեդիտորական պարտք և այդ գումարը վճարել է 2021թ. բյուջեի հաշվին:

Եզրահանգում: Տարեսկզբին 4,377,650.4 հազ. դրամի չափով մատուցված ծառայությունները չեն հաշվեգրվել որպես կրեդիտորական պարտք, ինչի հետևանքով Նախարարության դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին հաշվետվությունը եղել է էականորեն խեղաթյուրված: Միաժամանակ, հաշվետվության մեջ չի արտացոլվել նաև 2,075.3 հազ. դրամ փորձաշրջան անցնող նորանշանակ աշխատակիցների աշխատանքները համակարգելու համար նախատեսված պարգևավճարը, որը վճարվել է 2021թ. բյուջեի հաշվին:

5.1 «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» ծրագրի վերաբերյալ

«ՀՀ 2021թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն Նախարարությանը սահմանված խնդիրների իրականացման համար նախատեսվել է 1-ին եռամսյակի համար հատկացնել 185,890.40 հազ. դրամ:

Ծրագիր	Հոդված	Հաշվետու ժամանակահատվածի պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
Ընդամենը		185,890.40	185,890.40	183,777.45	271,522.82
Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	111,267.90	118,322.70	118,322.70	166,126.71
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	22,932.50	22,932.50	22,932.50	47,174.98
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	26,575.00	26,575.00	26,575.00	26,575.00
	- Էներգետիկ ծառայություններ	11,725.00	7,325.00	7,292.55	9,395.40
	- Կոմունալ ծառայություններ	179.60	179.60	139.86	134.64
	- Կապի ծառայություններ	1,911.80	1,421.80	1,398.71	1,094.59
	- Ապահովագրական ծախսեր	320.00	-	-	-
	- Ներքին գործուղումներ	1,955.90	1,955.90	778.00	778.00
	- Համակարգչային ծառայություններ	6,532.20	6,345.40	6,105.13	19,248.37
	- Տեղեկատվական ծառայություններ	-	-	-	-
	- Ներկայացուցչական ծախսեր	-	-	-	-
	Մասնագիտական ծառայություններ	300.00	300.00	88.00	88.00
	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	-	-	-	96.82
	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425.90	-	-	-
	- Գրասենյակային նյութեր և հագուստ	345.70	532.50	-	67.80
	- Տրանսպորտային նյութեր	-	-	-	295.00
	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	1 418.90	-	-	140.00
	- Պարտադիր վճարներ	-	-	-	53.00
	- Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	-	-	65.00	174.51
	- Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	-	-	80.00	80.00

➤ Աշխատանքի վարձատրություն

(411100-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ, 411200-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ, 411300-Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում)

ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից Նախարարությունում 2020 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության արդյունքների նկատմամբ իրականացված հաշվեքննության հետիսկողական գործընթացի վերաբերյալ.

Պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակցի անհամապատասխանություն:

Արձանագրված անհամապատասխանությունը: Նախարարության Մոր և մանկան առողջության պահպանման վարչության երեխաների առողջության պահպանման բաժնի աշխատակից Ն.Փ., Օտարերկրյա ներդրումների ներգրավման բաժնի աշխատակից Հ.Ս., Փորձագիտական գնահատման և մշտադիտարկման 1-ին բաժնի աշխատակից Ն.Ա. 2019թ. իրենց դիմումների համաձայն ազատվել են աշխատանքից և օրենքով սահմանված կարգով ստացել վերջնահաշվարկ:

Աշխատանքից ազատման նույն օրը նրանց հետ կնքվել է աշխատանքային պայմանագրեր՝ Ն.Փ. ստանձնել է Մոր և մանկան առողջության պահպանման վարչության երեխաների առողջության պահպանման վարչության պետի, Հ.Ս.՝ Օտարերկրյա ներդրումների ներգրավման բաժնի պետի, Ն.Ա.՝ Փորձագիտական գնահատման և մշտադիտարկման 1-ին բաժնի պետի ժամանակավոր թափուր պաշտոնները:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պետական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձը (բացառությամբ քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվից պաշտոն զբաղեցնող անձի) վարձատրվում է տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխան սանդղակի առաջին մակարդակին համապատասխանող պաշտոնային դրույքաչափով: Սակայն Նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչությունը չպահպանելով հիշյալ օրենքի պահանջը և ղեկավարվելով ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 23.10.2018թ. 07.7.4/35671-18 շրջաբերական նամակով, վերոհիշյալ անձանց պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցը ոչ թե սահմանել է վերոնշյալ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ այլ շարունակել է վճարել նախկին գործակցով, կամ ավելի բարձր մակարդակի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակցով, ինչի հետևանքով 2020թ. երեք աշխատողների վճարվել է 2,110.9 հազ.դրամ ավելի աշխատավարձ (Ն.Փ.-ին՝ 746,922 դրամ, Հ.Ս.-ին՝ 331,241 դրամ, Ն.Ա.-ին՝ 1,032.8 դրամ):

Հետիսկողական գործընթացի արդյունքները: Նախարարությունը մինչ օրս համապատասխան միջոցներ չի ձեռնարկել, և պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցները չեն համապատասխանեցվել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

ԱՆ դիրքորոշում: ԱՆ կողմից ձեռնարկված միջոցառումների՝ հայտարարված մրցույթների ամփոփման արդյունքում, Օտարերկրյա ներդրումների ներգրավման բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ս.-ն, Փորձագիտական գնահատման և մշտադիտարկման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ն.Ա.-ի պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները համապատասխանեցվել են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Ինչ վերաբերվում է Մոր և մանկան առողջության պահպանման վարչության երեխաների առողջության պահպանման բաժնի պետ Ն.Փ.-ի մասով արձանագրված անհամապատասխանությանը,

ապա հայտնում են, որ հարցը կկարգավորվի համապատասխան թափուր պաշտոնի մրցույթը հայտարարվելու և հաղթող ճանաչվելուց հետո:

Հաշվեքննողի արձագանք: Ընդունվել է ի գիտություն, կիրականացվեն հետհսկողական ընթակարգեր:

Իրավական, նորմատիվ ակտերի անհամապատասխանություն:

Արձանագրված անհամապատասխանությունը: Նախարարության կողմից չի պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջը՝ նորմատիվ իրավական ակտով հաստատվող ցանկերը, աղյուսակները և այլն ամրագրվում են (կամ ձևակերպվում են) նորմատիվ իրավական ակտի անբաժանելի մաս համարվող հավելվածների ձևով, դրանք առանց տվյալ նորմատիվ իրավական ակտի իրավաբանական ուժ չունեն, միաժամանակ նորմատիվ իրավական ակտի համապատասխան մասերը հղումներ չեն պարունակում այդ հավելվածներին:

Հետհսկողական գործընթացի արդյունքները: 2021թ մայիս ամսից սկսած դրամական պարգևատրումների մասին հրամանների հավելվածները հաստատվում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներին համապատասխան:

Կնքված աշխատանքային պայմանագրերի հետ կապված խնդիրներ:

Արձանագրված անհամապատասխանությունը: Համակարգչային ցանցի ադմինիստրատորի պարտականություններ կատարող Ա.Մ.-ի հետ կնքված աշխատանքային պայմանագրով պաշտոնային դրույքայաքաչափը սահմանվել է 535000 դրամ: Ա.Մ.-ի և գործատուի միջև 2020թ. հունվարի 31-ին կնքված համաձայնագրի համաձայն 2020թ. փետրվարի 1-ից ամսական աշխատավարձը իջեցվել է 235.0 հազ. դրամով և կազմել 301.0 հազ.դրամ, 2020թ մարտի 2-ին կողմերի միջև կնքվել է 2-րդ համաձայնագիրը, որով պայմանագրի գինն ավելացվել է 90,000 դրամով և կազմել 391.0 հազ. դրամ: 2020թ. Ա.Մ.-ի 1,950.9 հազ. դրամով ավելի գումար է վճարվել:

Աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերի հաշվեքննությունից պարզվել է, որ տեղեկատվական տեխնոլոգիայի համակարգողների դեպքում (Ա.Հ. և Լ.Շ.) ևս չի պահպանվել ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 737-Ն որոշման պահանջները:

ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 737-Ն որոշման համաձայն, համակարգչային ցանցի ադմինիստրատորի, ինչպես նաև համակարգողի պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցը սահմանվել է 2.75 (181885 դրամ): Նախարարությունն, այս դեպքում ևս, չպահպանելով հիշյալ որոշման պահանջը, Ա.Հ.-ի պաշտոնային դրույքաչափը սահմանել է 517,0 հազ. դրամ: 01.02.2020թ. կողմերի միջև կնքվել է համաձայնագիր և վերջինիս պաշտոնային դրույքաչափը իջեցվել 226,0 հազ.դրամով և կազմել է 291,0 հազ.դրամ: 01.03.2020թ. կնքվել է 2-րդ համաձայնագիրը և պաշտոնային դրույքաչափը ավելացվել է 10000 դրամով և կազմել է 301000 հազ.դրամ: 2020թ. Ա.Հ.-ին ընդամենը վճարվել է 3,592.8 հազ.դրամ՝ 2,182.6 հազ.դրամի փոխարեն, կամ 1,409.2 հազ.դրամով ավելի գումար է վճարվել:

Լ.Շ.-ի պաշտոնային դրույքաչափը աշխատանքի ընդունվելիս՝ 20.01.2020թ. սահմանվել է 470000 դրամ, վերջինս աշխատել է մինչև փետրվարի 14-ը և հունվար-փետրվար ամիսների համար վճարվել է 303,720 դրամ՝ 188,600 դրամի փոխարեն, կամ ավելի է վճարվել 115.1 հազ.դրամ:

Հերիսկողական գործընթացի արդյունքները: Համակարգչային ցանցի ադմինիստրատորի (Ա. Մ.), տեղեկատվական տեխնոլոգիայի համակարգողի (Ա. Հ.) պաշտոնային դրույքաչափերը մինչ օրս չեն համապատասխանեցվել ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 737-Ն որոշմամբ սահմանված պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցներին:

ԱՆ դիրքորոշում: Կնքված աշխատանքային պայմանագրերի մասով արձանագրված անհամապատասխանության մասին հայտնում են, որ Ա.Մ.-ի և Ա.Հ.-ի պաշտոնային դրույքաչափերը համապատասխանեցվել են ՀՀ կառավարության 03.07.14թ. թիվ 737-Ն որոշմամբ սահմանված պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցներին, մասնավորապես փոփոխություններ են կատարվել (կնքվել են համաձայնագրեր) աշխատանքային պայմանագրերում: Ընդ որում, կատարված փոփոխությունները փարածվելու են 2021 թվականի օգոստոսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Հաշվեքննողի արձագանք: Ընդունվել է ի գիտություն, կիրականացվեն հերիսկողական ընթացակարգեր:

Արձանագրված անհամապատասխանությունը: ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 737-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ մարմնի ղեկավարը, կամ ՀՀ օրենսդրությամբ համապատասխան լիազորություններով օժտված անձը կարող է քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց՝ բարեխիղճ աշխատանքի համար խրախուսել՝ աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցների հաշվին: Նախարարությունը չպահպանելով հիշյալ որոշման պահանջը, պայմանագրային աշխատողներին պարգևատրել է 4112 հոդվածով նախատեսված միջոցների, ինչպես նաև՝ «COVID-19» ծրագրի շրջանակներում Նախարարությանը հատկացված միջոցների հաշվին, այն դեպքում, երբ այդ ծրագրի շրջանակներում պարգևատրման համար միջոցներ նախատեսված չի եղել:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2020թ. պայմանագրային աշխատողներին (առանց փորձագետների) վճարվել է 83,010.7 հազ. դրամ՝ աշխատավարձ և պարգևավճար՝ 4111 հոդվածով 727.9 հազ.դրամ, 4112 հոդվածով 10,751.6 հազ.դրամ, «COVID-19» ծրագրի միջոցներից 6,304.3 հազ.դրամ:

Հերիսկողական գործընթացի արդյունքները: Նախարարությունը շարունակում է չպահպանել ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 737-Ն որոշման 3-րդ կետի պահանջը՝ քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց վճարվել է պարգևավճարներ 4112 հոդվածով նախատեսված միջոցներից:

Արձանագրված անհամապատասխանությունը: Աշխատանքային պայմանագրերի 4.4 կետով սահմանվել է, որ աշխատողին տրամադրվում է 24 աշխատանքային օր արձակուրդ, որից 4 օրը լրացուցիչ: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը, հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում սահմանվում է 20 աշխատանքային օր, իսկ օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանված է ամենամյա լրացուցիչ արձակուրդի տրամադրման դեպքերը:

Հերիսկողական գործընթացի արդյունքները: Նախկինում կնքված որոշ պայմանագրերի 4.4 կետում կատարվել է համապատասխան փոփոխություն և արձակուրդի լրացուցիչ 4 աշխատանքային օր բառերը հանվել են, իսկ նոր կնքվող պայմանագրերում արձակուրդի օրերը սահմանվել է օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:

Փորձագետների և քաղաքացիական աշխատանք կատարողների հետ կապված խնդիրներ

Արձանագրված անհամապատասխանությունը: Նախարարության կողմից փորձագետների ներգրավման հետ կապված հարաբերություններն իրականացվել է չպահպանելով ՀՀ կառավարության 02.08.2018թ. թիվ 878-Ն որոշման պահանջները մասնավորապես՝ Պետական մարմնի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթի իրականացման ծավալների կտրուկ ավելացման դեպքում փորձագետ ներգրավվում է մինչև մեկ տարի ժամանակահատվածով, ընդ որում, տվյալ դեպքում փորձագետի հիմնական աշխատավարձը սահմանվում է այդ գործառույթն իրականացնող քաղաքացիական ծառայողի հիմնական աշխատավարձի նվազագույն չափով (քաղաքացիական ծառայողի պաշտոնի ենթախմբին համապատասխանող սանդղակի նվազագույն գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալով): Նախարարությունը չի պահպանել վեոնշյալը՝ թվով 13 փորձագետներից 4-ը ներգրավել են աշխատանքում 2019թ. հունիս-դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում և մինչ 2021թ. ապրիլի 9-ը, դեռևս աշխատել են:

Հերիսկողական գործընթացի արդյունքները: Թվով 4 փորձագետների պայմանագրերը դադարեցվել են 2021թ. հունիս ամսին՝ համապատասխան հրամաններով:

Արձանագրված անհամապատասխանությունը: ՀՀ կառավարության 02.08.2018թ. թիվ 878-Ն որոշմամբ հաստատված Կարգի 14-րդ կետի համաձայն՝ վարձատրությունն իրականացվում է համապատասխան մարմնի տնտեսված, ինչպես նաև օրենքով չարգելված միջոցներից: Փորձագետների համար հավելավճարներ, պարգևատրումներ, լրավճարներ չեն սահմանվում, բացառությամբ 3-րդ կետով փորձագետ ներգրավելու դեպքում: Նախարարությունը 14-րդ կետի պահանջը չպահպանելու հետևանքով 2020թ. պետական բյուջեից կատարել 21,344.6 հազ. դրամի ավելի ծախս:

Հերիսկողական գործընթացի արդյունքները: Նախարարությունը շարունակել է անդրեսել Կարգի 14-րդ կետի պահանջը, 2021թ. առաջին եռամսյակում շարունակել է փորձագետներին վճարել պարգևավճար 4112 հոդվածով նախատեսված միջոցների հաշվին:

Արձակուրդի տրամադրման և վճարման հետ կապված անհամապատասխանություններ

Արձանագրված անհամապատասխանությունը: Նախարարի տեղակալի օգնական Ա. Ա. աշխատանքի է ընդունվել 2020թ. հունվարի 8-ին: Օգոստոսի 20-ին (թիվ 352-Ա հրաման) աշխատանքային 5 օր՝ օգոստոսի 24-ից 31-ը, տրամադրվել է արձակուրդ՝ վճարելով միանվագ արձակուրդային վճար՝ 12 ամիսների համար: 2020թ. դեկտեմբերի 14-ի թիվ 199-Ա հրամանի համաձայն, վերջինս ազատվել է աշխատանքից: Արդյունքում Ա.Ա.-ն աշխատել է 11, սակայն արձակուրդայինը վճարվել է 12 ամիսների համար: «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հիմնական արձակուրդային վճարից բացի, պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն

գրադեցնող անձին վճարվում է լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով: Աշխատանքից ազատվելու դեպքում միանվագ արձակուրդային վճարը տրվում է փաստացի աշխատած ամիսների համար համամասնորեն: Նախարարությունը չի պահպանել վերոնշյալ հոդվածի պահանջը Ա. Ա.-ին վճարել է 35.2 հազ դրամ ավելի գումար:

Հերհսկողական գործընթացի արդյունքները: Նախարարության կողմից համապատասխան միջոցներ չի ձեռնարկվել ավելի վճարված գումարը ետ գանձելու համար:

Արձանագրված անհամապատասխանությունը: Լ.Ն.-ին արձակուրդից հետո կանչելիս չի պահպանվել ՀՀ կառավարության 15.11.2018թ. «Քաղաքացիական ծառայողին արձակուրդ տրամադրելու կարգը և պայմանները սահմանելու մասին» թիվ 1287-Ն որոշման 19-րդ, 20-րդ կետերի, ինչպես նաև 21-րդ կետի պահանջը՝ քաղաքացիական ծառայողին հետ կանչել թույլատրվում է միայն նրա գրավոր համաձայնության դեպքում, չի պահպանվել նաև 30-րդ կետի պահանջը՝ արգելվում է ամենամյա արձակուրդի փոխարինումը դրամական հատուցմամբ: Վերոնշյալ նորմերն ամրագրված է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 167-րդ և 170-րդ հոդվածներում:

Նախարարությունը չի պահպանել հիշյալ կարգի պահանջները, 2021թ. հունվարի 19-ի թիվ 20-Ա հրամանով Լ.Ն.-ին հետ է կանչել արձակուրդից, և արձակուրդի չօգտագործած օրերի համար կատարել է վճարում:

Հերհսկողական գործընթացի արդյունքները: Նախարարությունը համապատասխան միջոցներ չի ձեռնարկել՝ ավելի վճարված գումարը ետ չի գանձվել:

Արձանագրված անհամապատասխանությունը: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է տվյալ աշխատանքային տարում: Նախարարությունը չի պահպանել օրենսգրքի վերոնշյալ պահանջը:

Հերհսկողական գործընթացի արդյունքները: Հաշվետու ժամանակահատվածում Նախարարության կողմից աշխատակիցներին արձակուրդ տրամադրելիս առաջնահերթությունը տրվել է նախորդ տարիների չօգտագործած արձակուրդային օրերին:

➤ **Ներքին գործուղում**

Պետական բյուջեից Նախարարությանը ներքին գործուղումների համար 2021թ. 1-ին եռամսյակում նախատեսվել է հատկացնել 1,955.9 հազ. դրամ, փաստացի և դրամարկղային ծախսերը կազմել են 778.0 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված գործուղման մեկնած աշխատողներին գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի 9-րդ կետի համաձայն՝ գործուղվող աշխատողին գործուղման ծախսերի հատուցումը տրվում է գործուղում մեկնելուց առնվազն մեկ օր առաջ, իսկ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատողը պարտավոր է ներկայացնել գործուղման վկայականը, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը, գործուղման ծախսերը հաստատող փաստաթղթերը:

Նախարարությունը չի պահպանել վերոնշյալ կետի պահանջը՝ գործուղման ծախսերի հատուցումը կատարել է ոչ թե առնվազն մեկ օր առաջ, այլ աշխատակիցների գործուղումից վերադառնալուց հետո՝ կարգով սահմանվածից ուշ:

Գործուղման փաստաթղթերի հաշվեքննության արդյունքում արձանագրվել է, որ 2021թ. 1-ին եռամսյակի ներքին գործուղման ծախսերի բոլոր հաշվետվությունները ստորագրված չեն եղել գործուղվող աշխատակցի կողմից, ավելին, դրանք լրացված են եղել մեկ անձի կողմից:

ԱՆ բժշկական օգնության քաղաքականության վարչության աշխատակից Ա. Ս. գործուղվել է Սյունիքի և Վայոց Ձորի մարզեր, սակայն գործուղման վկայականում և գործուղման ծախսերի հաշվետվությունում նշված է միայն Սյունիքի մարզ:

Նախարարի 16.12.2020թ. թիվ 4445-Ա հրամանով գործուղվել են Վ.Ա.-ն և Մ.Պ.-ն, սակայն ներկայացված փաստաթղթերում առկա է միայն Վ.Ա.-ին վերաբերվող փաստաթղթեր, մեկ այլ 16.02.2021թ. թիվ 62-Ա հրամանով գործուղվել են Ա.Ս.-ն և Ղ.Օ.-ն, սակայն ներկայացված փաստաթղթերում առկա է միայն Ա.Ս.-ին վերաբերվող փաստաթղթեր:

Նախարարի 09.02.2021թ. թիվ 54-Ա հրամանով Ա.Ա.-ն, Լ.Ն.-ն, Ա.Ս.-ն և Գ.Ս.-ն գործուղվել են Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի բժշկական կենտրոններ, սակայն գործուղման ծախսերի հաշվետվությունում նշված է միայն քաղաք Գյումրի, իսկ գործուղման վկայականում առկա է միայն Գյումրու ԲԿ-ի կնիքը:

5.2 Համամասնորեն ֆինանսավորվող ծրագրերի վերաբերյալ

Հաշվեքննության շրջանակներում ընդգրկված Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ, Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց, Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ, Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ, Իմունականխարգելման ազգային ծրագիր, Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ, Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայություններ, Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայություններ միջոցառումների ֆինանսավորումն իրականացվել է յուրաքանչյուր ամիս կազմակերպությունների կողմից ներկայացված փաստացի կատարողականի հիման վրա: Նշված միջոցառումների գծով ամփոփ ֆինանսական ցուցանիշները ներկայացված են աղյուսակում:

Միջոցառում	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ	27,369,351.30	26,969,351.30	5,228,278.38	7,576,257.98
Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց	3,390,799.40	3,619,799.40	678,159.90	678,159.90
Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ	7,043,928.50	6,790,855.60	1,258,321.40	1,595,248.50

Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ	2,931,989.10	3,281,989.10	586,397.80	929,397.80
Իմունական խարզելման ազգային ծրագիր	3,500,000.00	3,271,000.00	1,246,000.00	1,112,023.70
Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ	3,400,000.00	3,400,000.00	680,000.00	630,000.00
Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայություններ	3,200,000.00	3,200,000.00	640,000.00	556,000.00
Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայություններ	2,421,258.00	2,221,258.00	401,928.80	401,928.80
ԸՆԴԱՄԵՆԸ	53,257,326.30	52,754,253.40	10,719,086.28	13,479,016.68

Ամբուլատոր բժշկական օգնության ծառայությունների համար վճարվելիք գումարը հաշվարկվել է ավտոմատացված սկզբունքով՝ ԱՐՄԵԴ համակարգի միջոցով: Հիմք ընդունելով տվյալ բուժհաստատության հաշվեցանկում ընդգրկված բնակչության թվաքանակը, համակարգը մեկ բնակչի հաշվով օրեկան արժեքի և ամսվա օրերի քանակի հիման վրա հաշվում է տվյալ կազմակերպության կողմից մատուցված ծառայության հանրագումարը, որի հիման վրա բուժհաստատությունը ներկայացնում է հանձնման-ընդունման արձանագրություն և հաշիվ-ապրանքագիր:

Նախարարության համապատասխան պատասխանատու ստորաբաժանումը բժշկական հաստատությունների կողմից ներկայացված ամփոփ հաշվետվության հիման վրա ընդունում է մատուցված ծառայությունը, որից հետո կատարվում է վճարումը: Գործընթացի սխեմատիկ պատկերը ներկայացված է գծապատկերում:



Արձանագրված անհամապատասխանություն: Նախարարության կողմից, բացի ներկայացված տվյալները ԱՐՄԵԴ համակարգի տվյալների հետ համադրելը, որևէ այլ գործընթաց չի իրականացվում, որը հնարավորություն կընձեռեր ստանալու բավարար ապացույցներ՝ ծախսերի արժանահավտության գնահատման ժամանակ:

Հեղուկոդական գործընթացի արդյունքները: Արձանագրված ռիսկերի նվազեցման ուղղությամբ Նախարարության կողմից համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել:

ԱՆ դիրքորոշում: Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայությունների ծրագրով ֆինանսավորման մեխանիզմը, ինչպես արդեն նշել ենք, ամրագրված է ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման մեջ, որը հանդիսանում է միջազգայնորեն ընդունված փարբերակ ԱԱՊ օղակի համար՝ ըստ մարդաշնչի:

Միևնույն ժամանակ, առողջապահության նախարարի 2019թ. հուլիսի 25-ի թիվ 2030-Լ հրամանով հաստատվել է առողջության առաջնային պահպանման բժշկական հաստատությունների գործունեությունը գնահատող ցուցանիշների ցանկը, վարձարության ֆոնդի ձևավորման, առողջության առաջնային պահպանման բժիշկների գործունեությունը գնահատող ցուցանիշների (կատարողականի) ներկայացման և գնահատման, դրանց վրա հիմնված խրախուսական ֆինանսավորման ընթացակարգերը (բոնուսային համակարգ), որի շրջանակներում ԱԱՊ բժշկական հաստատությունների ըստ կատարողականի ֆինանսական միջոցները հատկացվում են «ՀՀ պետական բյուջեի մասին» ամենամյա օրենքով՝ համապատասխան ծրագրով նախատեսված միջոցներից և Համաշխարհային բանկի «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային ծրագրի շրջանակներում տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցներից (կից ներկայացնում են հրամանը):

Հետևաբար, ԱԱՊ-ում ըստ մարդաշնչի ֆինանսավորմանը համարել գործում է արդյունքային ցուցանիշներով ֆինանսավորվող համակարգ:

Հաշվեքննողի արձագանք: ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021թ. փետրվարի 25-ի թիվ 58-Ա որոշման համաձայն Հաշվեքննիչ պալատը կատարողականի հաշվեքննություն է իրականացնում «Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ» ծրագրի նկատմամբ, որի շրջանակներում առավել հանգամանալից կուտումնասիրվեն արձանագրված ռիսկերը:

5.3 Դեպքերի անհատական վարման (case management) ընթացակարգի կիրառմամբ իրականացված միջոցառումներ

Հաշվեքննության ստանդարտների համապատասխան իրականացված ընտրանքում ներառված Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 3,313,495.0 հազ. դրամ), Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 1,288,510.20 հազ. դրամ), Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 1,104,302.70 հազ. դրամ), Շտապ բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 795,827.60 հազ. դրամ), Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 761,167.90 հազ. դրամ) և Սրտի անհետաձգելի վիրահատություններ (դրամարկղային ծախս՝ 330,255.00 հազ. դրամ) միջոցառումների իրականացումը կազմակերպվում է իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ Կատարող) կողմից իրականացված դեպքերի անհատական վարման (case management) միջոցով:

ՀՀ առողջապահության նախարարի 2019թ. մարտի 20-ի թիվ 675-Ա հրամանով կանոնակարգվում է Նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և բժշկական կազմակերպությունների միջև կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ Կատարող) կողմից իրականացված դեպքերի անհատական վարման (case management) հարաբերությունները:

Համաձայն ընթացակարգի 2-րդ բաժնի՝ հիվանդանոցային կամ ամբուլատոր պայմաններում անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման դեպքերի անհատական վարման (case management) շրջանակներում Կատարողն առավելագույնը 1 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով իրականացնում է նախնական հարցում՝ հարցմանը կցելով պահանջվող

փաստաթղթերը: Պատվիրատուն Անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման դեպքում 1 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է նախնական հարցման հաստատում կամ մերժում:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ԱՐՄԵԴ համակարգում Նախնական հարցման տվյալները դրանց հաստատումից կամ մերժումից հետո չեն պահպանվել, ինչի հետևանքով անհնարին է դարձել հաշվեքննության շրջանակներում նախնական հայտերի հաստատման կամ մերժման համապատասխանության գնահատումը: Ավելին, նախնական հարցման գնահատման ժամանակ փորձագետ/մշտադիտարկողի կողմից բժշկական գնահատում չի իրականացվել, այլ գնահատվել է միայն քաղաքացու համապատասխանությունը պետական պատվերից օգտվելու իրավունքին, և համապատասխան ուղեգրի առկայությանը: Արդյունքում, նշված աշխատանքի իրականացման մեջ բացակայել է բժշկական բաղադրիչը, ինչը նշանակում է որ նույն աշխատանքը կարող է կատարվել նաև այլ մասնագետի կողմից, իսկ առավել նպատակահարմար և արդյունավետ կլինի ծրագրային փաթեթի միջոցով գործընթացի ողջ ավտոմատացումը:

Ընթացակարգի 3-րդ կետի համաձայն՝ Կատարողը նախնական հարցման հաստատում ստանալուց հետո սահմանված ծավալով բժշկական ծառայությունները փաստացի մատուցելուց (դուրս գրումից) հետո առավելագույնը 20 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Հայց (ոչ ուշ քան ընթացիկ տարվա դեկտեմբերի 15-ը): Պատվիրատուն Հայցը ստանալուց 3 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում կամ մերժում է Հայցը:

Փորձագետի/մշտադիտարկողի կողմից ներկայացված և մատուցված բժշկական ծառայության կամ դրանց ծավալների համապատասխանության գնահատման խնդիրներ:

Համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի բժշկական ծառայությունների մատուցումն իրականացվում է համաձայն կլինիկական ուղեցույցի, որն իրենից ներկայացնում է լիազոր մարմնի հաստատած բժշկական մասնագիտական հասարակական կազմակերպությունների կամ առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների՝ ապացուցողական բժշկության սկզբունքների հիման վրա մշակած և բուժաշխատողների համար նախատեսված փաստաթուղթ, որը ներառում է որոշակի հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարման ժամանակակից բժշկագիտության լավագույն փորձը և բավարարում է առողջության հետ կապված որոշակի խնդիր ունեցող պացիենտների կարիքները, որի նպատակը բուժաշխատողների կողմից կլինիկական որոշակի դեպքի համար որոշում կայացնելուն աջակցելն է: Մինչև ժամանակ, նույն օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի՝ բուժաշխատողն իրավունք ունի ելնելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքի իրավիճակից՝ կայացնելու ապացուցողական բժշկությամբ հիմնավորված որոշումներ՝ լրացուցիչ միջամտություններ կատարելու համար, որոնք նախատեսված չեն համապատասխան կլինիկական ուղեցույցներով:

ԱՆ դիրքորոշում: ԱՆ համար որպես ծախսերի արժանահավաքությունը ստուգելու մեխանիզմ, հիմք է հանդիսանում ԱՆ և բժշկական կազմակերպության միջև կնքված՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին պայմանագիրը, որի համապատասխան հավելվածով նախատեսվում են ծառայությունների

մարտուցման պայմանները և դրանց խախտման դեպքում պատասխանատվությունը: Նշված հավելվածով նախատեսվում է, թե որ խախտման դեպքում ինչպիսի տույժեր, տուգանքներ են կիրառվում: Միևնույն ժամանակ, պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական ծառայությունները մարտուցվում են կառավարության որոշմամբ նախատեսված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հաբուկ) խմբերին, ուստի եթե և բժշկական ծառայությունները, և սոցիալապես անապահով ու առանձին (հաբուկ) խմբերին պարկանելու պայմանները համապատասխանում են օրենսդրության պահանջներին, ապա ծախսերի արժանահավատությունը հիմնավորվում է:

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել, քանի որ ինչպես արձանագրված է եզրակացության հաջորդ բաժիններում, գործող ընթացիկ հսկողական համակարգի ոչ լիարժեքության կամ գրեթե բացակայության պարագայում Նախարարությունը չունի բավարար գործիքակազմ պատասխանատվության լիարժեք և արդյունավետ մեխանիզմներ ու միջոցներ կիրառելու համար:

Արձանագրված անհամապատասխանությունը: Դեպքերի անհատական վարման (case management) ընթացակարգում ներգրավված հիվանդությունների գերակշիռ մասի համար բացակայել է լիազոր մարմնի կողմից հաստատված կլինիկական ուղեցույցները: Նախարարի ընդհանուր թվով 115 հրամաններով հաստատված ուղեցույցների թիվը չի գերազանցում 1000-ը, մինչդեռ ԱՀԿ-ի կողմից հաշվառված հաճախակի հանդիպող հիվանդությունների թիվը գերազանցում է 12000-ը:

Ուղեցույցների բացակայության պարագայում խնդրահարույց է դառնում նաև փորձագետի/մշտադիտարկողի կողմից ներկայացված և մատուցված բժշկական ծառայության կամ դրանց ծավալների համապատասխանության գնահատման գործող համակարգի արդյունավետությունը, քանի որ փորձագետ/մշտադիտարկողը չունի կլինիկական ուղեցույցի միջոցով հաստատված գործողությունների և միջամտությունների շրջանակ, որի հետ կարող է համեմատել մատուցված բժշկական ծառայության շրջանակը և ծավալները: Արդյունքում, փորձագետ/մշտադիտարկողը ստուգում է ընդամենը Հայցի տեխնիկական համապատասխանությունը և պահանջվող փաստաթղթերի առկայությունը:

Հերիսկողական գործընթացի արդյունքները: Նախարարության կողմից համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել, նոր ուղեցույցներ գրեթե չեն մշակվել, և ռիսկերի նվազեցման ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկվել:

Հաշվեքննողի արձագանք: Կլինիկական ուղեցույցների մշակմանն ուղղված աշխատանքներն ընթացքի մեջ են, որոնք հաստատվելուց հետո կներդրվեն համակարգում և կկիրառվեն որպես ոլորտը կանոնակարգող իրավական ակտեր: Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ նախատեսված է կլինիկական ուղեցույցների թվայնացում և ներդրում «Արմեդ» համակարգ:

ԱՆ դիրքորոշում: Կիրականացվի հերիսկողություն կլինիկական ուղեցույցների մշակման և ներդրման գործընթացը գնահատելու նպատակով:

Արձանագրված անհամապատասխանությունը: Յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո, կազմակերպությունների կողմից ներկայացվում է կատարված աշխատանքների մասին հաշվետվություն, որը փորձագետ/մշտադիտարկողի կողմից համեմատվում է ԱՐՄԵԴ համակարգի տվյալների հետ, ստուգվում ամփոփ ցուցանիշի համապատասխանությունը և փոխանցվում ՊԱԳ ֆինանսական ապահովման բաժին վճարումներն իրականացնելու նպատակով: Չնայած ֆինանսավորումը հաստատվում է ըստ առանձին քեյսերի, սակայն հանձնման ընդունման ժամանակ երկկողմանի ստորագրվում և հաստատվում է միայն ամփոփ կատարողականը՝ մեկ թվով, իսկ քեյսերի մակարդակում հաստատում և վավերացում չի իրականացվում, ինչը նվազեցնում է հետագայում հետհսկողական միջոցառումների իրականացման հնարավորությունն ու արդյունավետությունը:

Հերհսկողական գործընթացի արդյունքները: Նախարարության կողմից համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել, հանձնման-ընդունման գործընթացը շարունակվում է իրականացվել մեկ ընդհանուր թվով, ինչպես նաև հերհսկողական միջոցառումների իրականացման ուղղությամբ միջոցառումներ չեն ձեռնարկվել:

ԱՆ դիրքորոշում: ՀՀ ԱՆ ՊԱԳ փորձագիտական գնահատման և մշտադիտարկման առաջին բաժնում առկա է գլխավոր մշտադիտարկողի մեկ հասարիք, որը չի պահանջում առողջապահություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, սակայն որի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով նախատեսված են վերջինիս իրավունքները, պարտականությունները, գործառույթները:

Աշխատանքային ծավալի ծանրաբեռնվածության պայմաններում միևնույն աշխատողի վրա դրվում են նաև աշխատանքային լրացուցիչ պարտականություններ, որը դեպքերի անհատական վարման ընթացքում ժամկետների պահպանման առումով որոշակի խնդիրներ է առաջացնում:

Դեպքերի անհատական վարման ժամանակ հայտերի գնահատման և հաստատման համար անհրաժեշտ են ոչ թե նեղ մասնագիտական գիտելիքներ, այլ բազային բժշկական գիտելիքներ՝ ախտորոշման և մի շարք այլ հարցերի մասով տեղեկատվության փոխադարձություն իմաստով: Միևնույն ժամանակ, փորձը վերցված է ապահովագրական ընկերություններից:

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել, քանի որ ԱՆ 2020թ. պետական բյուջեի կատարման հաշվեքննության շրջանակներում արձանագրվել էր որ նշված մշտադիտարկողի կողմից կատարվել է դեպքերի վարում և գնահատում, որը ինչպես նշված է դիրքորոշման վերջին պարբերության մեջ պահանջում է առնվազն բազային բժշկական կրթություն:

➤ **Ընթացիկ հսկողություն**

2021թ. 1-ին եռամսյակում Նախարարության գործունեության նկատմամբ ներքին աուդիտ չի իրականացվել, առկա չի եղել նաև ներքին հսկողական մեխանիզմ կամ դրա սահմանման վերաբերյալ որևէ իրավական ակտ:

Ներքին հսկողական միակ միջոցը հանդիսացել է Նախարարի 2020թ. դեկտեմբերի 23-ի 45-59-Լ հրամանի հաստատված պայմանագրի օրինակելի ձևի 2.3.3 կետի պահանջը՝ Պատվիրատուն իրավունք ունի պայմանագրով նախատեսված աշխատանքների ուսումնասիրության, դիտարկման, մշտադիտարկման, փորձագիտական գնահատման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայակոչելու և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելու՝ աշխատանքն ընդունելուց հետո մինչև երեք տարվա ընթացքում:

Վերոնշյալ ուսումնասիրությունների իրականացման համար առկա չի եղել որևէ մեթոդաբանություն կամ աշխատակարգ, ինչպես նաև առկա չի եղել ուսումնասիրության ենթակա օբյեկտի ընտրության որևէ չափորոշիչ: Միաժամանակ, հաշվեքննությունն իրականացնող խմբին տրամադրված տեղեկատվության համաձայն 2021թ. 1-ին եռամսյակում ուսումնասիրություններ չեն իրականացվել:

Նախարարի 2020թ. դեկտեմբերի 23-ի 45-59-Լ հրամանի հաստատված պայմանագրի օրինակելի ձևի 2.3.2. կետի համաձայն 500 մլն. և ավելի տարեկան պայմանագրային ծավալ ունեցող բժշկական կազմակերպություններում Նախարարությունը կարող է ունենալ մշտական ներկայացուցիչ: Ներկայացուցիչների աշխատակարգը, պարտականությունները և իրավունքները կարգավորվում է Նախարարի համապատասխան հրամանով: 2021թ. թեև Նախարարությունն ընդհանուր թվով 36 կազմակերպությունների հետ ունեցել է 500մլն դրամը գերազանցող պայմանագրեր, սակայն դրանցից որևէ մեկում մշտական ներկայացուցիչ չի ունեցել:

Եզրահանգում: 2021թ. 1-ին եռամսյակում Նախարարության ներքին հսկողական համակարգը լիարժեք չի գործել, Նախարարությունը չի ունեցել բավարար գործիքակազմ իրականացված ծախսերի նկատմամբ լիարժեք և ամբողջ ծավալով հսկողություն իրականացնելու համար: